ԲՈՐԴՈՅԻ ԿՈՄՅՈՒՆԻԿԵՆ

մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում Եվրոպական ընդլայնված համագործակցության վերաբերյալ

Եվրոպական նախարարների, Եվրոպական սոցիալական գործընկերների և Եվրոպական Հանձնաժողովի հռչակագիրը մասնագիտական կրթության և ուսուցման վերաբերյալ, հանդիպում Բորդոյում 2008թ. նոյեմբերի 26-ին՝ վերանայելու Կոպենհագենյան գործընթացի գերակայությունները և ռազմավարությունները

I ԿՈՊԵՆՀԱԳԵՆԻՑ ԲՈՐԴՈ. ՍՏԵՂԾԱՐԱՐԱԿԱՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ԴԻՆԱՄԻԿ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Երբ Լիսաբոնի Ռազմավարությունը մեկնարկեց 2000թ. մարտին, երկրի կամ կառավարության ղեկավարները սահմանեցին 2010թ. որպես նպատակներին հասնելու վերջնաժամկետ:

2010թ. ազդարարում է նաև «Կրթություն և ուսուցում 2010» աշխատանքային ծրագրի վերջնաժամկետը, որի կարևոր բաղադրիչն է Կոպենհագենյան գործընթացը: Հետևաբար, հաջորդ երկու տարիները՝ 2009-2010, հնարավորություն կընձեռեն՝ գնահատելու Կրթության և Ուսուցման ծրագրի ու ռազմավարության հետագա գործողությունները, ինչպես նաև ազդելու վերջիններիս վրա:

Համագործակցության գործընթացը, որը մեկնարկեց Կոպենհագենում 2002 թվականին, շատ արդյունավետ էր: Այն նպաստում է Լիսաբոնի Ռազմավարության տնտեսական ու սոցիալական հատվածների հաջողությանը և խթանում է նաև ՄԿՈՒ ավելի դրական և ավելի դինամիկ պատկերի ստեղծմանը՝ միևնույն ժամանակ պահպանելով համակարգերի բազմազանության արժեքները:

Եվրոպական ՄԿՈՒ ոլորտը կազմավորվում է՝ սկսած Կոպենհագենից մինչև Մաստրիխ, Հելսինկի և Բորդո՝ հիմնվելով թափանցիկության և փոխվստահության վրա:

Ծայրահեղ առաջնահերթությունները Եվրոպական մակարդակով հիմնական գործիքների ստեղծման պատճառն են հանդիսացել

Գիտելիքի, հմտությունների և կարողությունների ճանաչման ու թափանցիկության, ինչպես նաև համակարգերի որակի համար հիմնական գործիքների ստեղծումը բաղկացած է Կոպենհագենյան գործընթացի քաղաքական առանցքային կարևորություն ունեցող օժանդակությունից՝ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության հատկորոշման ու վավերացման համար Եվրոպական ընդհանուր սկզբունքներ, Europass, Որակավորումների Եվրոպական Շրջանակ (ՈԵՇ), ՄԿՈՒ Եվրոպական Կրեդիտների հետագա համակարգ (ՄԿՈՒԵԿ) և Որակի Ապահովման Եվրոպական Հենքային հետագա Շրջանակ (ՈԵԵՀՇ): Այս գործիքները իրագործվում են մասնակից երկրների կողմից իրենց պետական օրենսդրության շրջանակներում, կամավոր կերպով:

Ավելին, նորացված աշխատանքային մեթոդները՝ Եվրոպական ցանցերի ստեղծումը, ազգային խորհրդատվությունները, թռիչքային ծրագրերը, փորձի պատշաճ

փոխանակումները, օգնել են՝ մեծացնելու շահագրգիռ անձանց տեղեկացվածությունը և նպաստելու ընդհանուր գործիքների կիրառմանը:

Գործընթացը մասնակից երկրների ազգային քաղաքականություններում հանգեցրել է էական փոփոխությունների

Եվրոպական գործիքները խթանում են որակավորումների թափանցիկությանը և համակարգերի արդիականացմանը, իսկ առաջիկայում՝ նաև շարժունության զարգացմանը:
Մաստրիխտում, այնուհետև Հելսինկիում ընդունված նպատակների շրջանակում Եվրոպական երկրների ՄԿՈՒ առկա գերակայություններն ազգային մակարդակով արտացոլում են շարունակականություն իրենց աշխատանքում: Նրանք նաև համապատասխանում են այն ոլորտներին, որտեղ երկրները ամենամեծ առաջընթացն են գրանցել:

Մասնավորապես, ուսումնառության արդյունքների վրա հիմնված Որակավորումների Եվրոպական Շրջանակը (ՈԵՇ) զարգացնելու համատեղ ջանքերը հանգեցնում են էական կատալիտիկ արդյունքների. ՈԵՇ-ը զգալիորեն նպաստում է որակավորումների ազգային շրջանակների իրագործմանը: Այն սկզբունքները, որոնց վրա հիմնված է ՈԵՇ-ը, համակարգերի կազմակերպման վրա ունեն էական ազդեցություն և կիրառվում են կրթության և ուսուցման բոլոր ճյուղերում ու մակարդակներում: Շեշտը հստակորեն դրվում է ուսումնառության արդյունքների վրա (գիտելիք, հմտություններ և կարողություններ):

Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքները վավերացնելու համար սահմանվում և մշակվում են իրավական ու վարչական շրջանակներ, ինչպես նաև մեթոդաբանություններ: Այսպիսի վավերացումը դիտվում է որպես որակավորումների ազգային շրջանակների իրագործման մի մաս:

Ինչ վերաբերում է ՄԿՈՒԵԿ համակարգին, ապա երկրները պատրաստ են ուսումնասիրելու այն միջոցները, որոնք հարկավոր են դա իրականացնելու համար: Ակնկալվող արդյունքը ներեվրոպական շարժունության հետագա զարգացումն է, անհատականացված կարիերայի ուղիների զարգացումը, ինֆորմալ և ոչ ֆորմալ ուսումնառության ավելի լավ ճանաչումը, կրթական համակարգերի միջև ավելի հստակ թափանցիկությունն ու փոխվստահությունը:

ՈԵՇ-ի և ՄԿՈՒԵԿ-ի ստեղծումը հանգեցնում է որակավորումների գործընթացներում և ուսումնառության արդյունքներում ավելի մեծ շահագրգռվածության և փոխվստահության զարգացման:

Ազգային քաղաքական գերակայություններում որակի վրա հրավիրված ուշադրությունը դառնում է միասնական, և մեծանում է ուսուցիչների ու դասընթացավարների կարողության, նրանց աշխատանքների և կարգավիճակի արդյունավետության վրա բևեռված ուշադրությունը:

Ուղղորդման կառույցները ուժեղանում են՝ շեշտը դնելով որակի, ուղղորդող ծառայությունների (հաշվի առնելով խոցելի խմբերին), ինչպես նաև համակարգող մեխանիզմների վրա, որոնք ապահովում են ցկյանս ուղղորդում:

Ընդհանուր առումով ռազմավարությունների հիմք են կազմում կանխիչ և նորոգիչ գործողությունները, որոնք նախագծված են՝ հեշտացնելու ցկյանս ուսումնառություն մուտք գործելու հնարավորությունը ուսումնառության նոր և ավելի ճկուն ուղիների միջոցով:

Գործընթացը մասնակից երրորդ երկրների ազգային քաղաքականություններում հանգեցրել է էական փոփոխությունների

Կոպենհագենյան գործընթացի միջոցով կատարված աշխատանքն ապահովում է անհրաժեշտ օգնություն ՄԿՈՒ համակարգերի արդիականացման ու բարեփոխումների համար (օժանդակություն ստանալով ԵԿՀ-ի կողմից) ընդլայնվելու և Եվրոպական հարևանության քաղաքականության միտում ունեցող երկրներում: Նախաձեռնություններ են եղել օրինակ որակավորումների ազգային շրջանակների, որակի ապահովման մոտեցումների և գործիքների, արդյունավետությանն ու անաչառությանը նպաստելու լուծումների կամ սոցիալական գործընկերների ներգրավումն ընդլայնելու նպատակ ունեցող մոտեցումների ստեղծմանն ուղղված առաջին քայլերի համար:

2008-2010: ժամանակ տրամադրել, իրագործել և երաշխավորել կապակցվածությունը

Վերոգրյալում նշված արդյունքները ցույց են տալիս, որ բոլոր երկրները իրենց նվիրել են ՄԿՈՒ համակարգերի արդիականացման գործընթացին, որը կապված է Եվրոպական գործիքների իրագործման հետ: Համատեղ մեթոդաբանությունները պետք է նպաստեն այս քայլերին:

Փորձի պատշաճ փոխանակման, թռիչքային ծրագրերի, ինչպես նաև ամրագրված գործընթացի համար ուժերի համախմբումը (սիներգիաները) և ցանցերը բաղկացած են գերակայություններից, որոնք ընդհանուր են բոլոր երկրների համար:

Բացի այդ, ելնելով տվյալ տնտեսական և սոցիալական խնդիրներից, Կոպենհագենյան գործընթացի համար առաջիկա տարիներին անհրաժեշտ է նոր ռազմավարական կանխատեսում:

II ԵՎՐՈՊԱՆ ՊԵՏՔ Է ԱՐՁԱԳԱՆՔԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳԼՈԲԱԼԻԶԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ

Եվրոպայի՝ գլոբալիզացման վերաբերյալ արձագանքը արտահայտված է Լիսաբոնի ռազմավարությունում, որը առաջ է քաշում գիտելիքի և նորարարության վրա հիմնված հասարակություն ու տնտեսություն.

> **«Բարձր որակի կրթության ապահովումը և մարդկային կապիտալի ու ստեղծարարության մեջ կյանքի ընթացքում ներդրումներն ավելի ու ավելի արդյունավետորեն կատարելը գլոբալիզացված աշխարհում Եվրոպայի հաջողության համար կարևորագույն նախապայմաններն են »** (Եվրոպական Խորհուրդ, 2008թ. մարտի 13-14):

Գլխավոր մարտահրավերներին պետք է արձագանքել

Երիտասարդության գործազրկության տոկոսային հարաբերությունը մնացել է բարձր (15.5% 2007թ.):

Երիտասարդության ձեռքբերումների մակարդակը. չնայած արձանագրված առաջընթացին՝ միայն ցածր միջնակարգային կրթությամբ անձանց տոկոսը (14.8% 2007թ.) դեռևս ավելի բարձր է, քան 2010թ. համար սահմանված 10%-ը:

Մեծահասակների որակավորման ցածր մակարդակ. աշխատանքային տարիքում (25-64) եվրոպացիների 78 միլիոնը ունի որակավորման ցածր մակարդակ: Մեծահասակներից չափազանց քչերն են մասնակցում ուսումնառության գործընթացներին: Մեծահասակ աշխատակիցները և ցածր որակավորում ունեցող մարդիկ, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկություններում աշխատողները սահմանափակվում են մասնավորապես ուսուցումով: Սա առկա խնդիրներից գլխավորն է, քանի որ փոքր ու միջին ձեռնարկությունները կազմում են տնտեսության հիմքը և հանդիսանում են աշխատանքի ստեղծման հիմնական աղբյուրը:

Հիմնական միտումներ. կառուցվածքային փոփոխություններ, որոնք ունեն էական ազդեցություն աշխատաշուկայի և ուսուցման համակարգերի վրա([1])

Եվրոպական Միությունն ունի նոր մարտահրավերներ իր սահմանների թե՛ ներսում, թե՛ դրսում, որոնք թերևս հատկորոշված չեն եղել 2000թվականին:

([1]) BUSINESS EUROPE, CEEP, CES, UEAPME, Եվրոպական աշխատաշուկաներին ուղղված գլխավոր մարտահրավերներ: Եվրոպական սոցիալական գործընկերների համատեղ վերլուծություն, 2007

Ամբողջ տնտեսության վրա տարածվող ճգնաժամն իր ազդեցությունը կունենա զբաղվածության վրա. գործազրկության մակարդակը հավանաբար կաճի: Այս համատեքստում հատկապես կարևոր է ՄԿՈՒ-ում ներդրումների խրախուսումը:

Գլոբալ մրցակցությունը մեծանում է՝ մեծացնելով նոր առաջացող տնտեսական ուժերի թվաքանակը (օր. Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան և Չինաստան՝ ԲՌՀՉ):

Ազգագրության փոփոխությունը, հատկապես ծերացող բնակչությունը, հետագա հմտություններն և տևական անհավասարությունը պահանջում են ուժեղ քաղաքականություններ՝ արձագանքելու այս մարտահրավերներին:

Տեխնոլոգիական արագ առաջընթացը, տեղեկատվության նոր տեխնոլոգիաները, հարատև զարգացման համար կարիքը և կլիմայի փոփոխությունից առաջացած մարտահրավերները պահանջում են ՄԿՈՒ միջոցով աշխատակիցների հմտությունների կարիքների կանխորոշում և հմտությունների մշտական համաձայնեցում:

Այսպիսով, Եվրոպայում մինչև 2020թ. ընկած ժամանակահատվածում կարող են լինել հմտությունների թերություններ, որոնք մեծանում են ԵՄ ընդլայնման պատճառով: 2006-2020թթ. միջև ընկած ժամանակահատվածում ավելի քան 20 միլիոն աշխատանք կարող է ստեղծվել ԵՄ-25-ում նախնական հատվածում ավելի քան 3 միլիոն աշխատանք, իսկ արդյունաբերությունում մոտ 0.8 միլիոն աշխատանք կորցնելու փոխարեն: Ակնկալվում է, որ աշխատանքների գրեթե երեք քառորդը պետք է լինի ծառայությունների ճյուղում: Աշխատաշուկան համալրելու համար պետք է 85 միլիոն աշխատանք լինի, մինչդեռ միևնույն ժամանակահատվածում աշխատող բնակչության համար կլինի մոտ 6 միլիոն աշխատանք([2]):

Բացի այդ, ուղեղների արտահոսքից խուսափելու համար աչալրջություն է անհրաժեշտ:

Եվրոպական ՄԿՈՒ քաղաքականությունների համար անհրաժեշտ է նոր ռազմավարական կանխատեսում

ՄԿՈՒ-ն գտնվում է տնտեսական, սոցիալական և զբաղվածության քաղաքականությունների խաչմերուկում: ՄԿՈՒ-ն պետք է զարգացնի գերազանցության

([2]) Cedefop, Եվրոպայում հմտությունների հետագա պահանջները, Կենտրոնացում 2020թ. վրա, Լյուքսեմբուրգ, Հրատարակությունների գրասենյակ, 2008: 25 ԵՄ անդամ պետությունների, գումարած Նորվեգիայի և Շվեյցարիայի կողմից կատարված ուսումնասիրություն (բացառությամբ Բուլղարիայի և Ռումինիայի):

http://www.trainingvillage.gr/etv/Information_resources/Boookshop/publication_details.asp?pub_id=509

գաղափարը և, միևնույն ժամանակ, երաշխավորի հավասար հնարավորություններ: Այն ունի կարևոր դերակատարություն Եվրոպայում պահանջվող հմտությունների մշակման գործում: Սերտորեն կապակցված լինելով ընդհանուր կրթության և բարձրագույն կրթության հետ՝ ՄԿՈՒ-ն ունի առանցքային կարևորություն ցկյանս ուսումնառության ռազմավարություններն իրագործելու համար: Կրթության և ուսուցման ոլորտում Եվրոպական համագործակցության ռազմավարական հետագա շրջանակը կարող է վճռորոշ դերակատարություն ունենալ այս համատեքստում:

ՄԿՈՒ-ի բաղադրիչ մաս է կազմում ներդրումը, որը պետք է.

Հաշվի առնի սոցիալական համախմբվածության, անաչառության և ակտիվ քաղաքացիության նպատակները

Այս նպատակը ենթադրում է առանցքային կորողությունների, առավելագույնը սոցիալական հմտությունների, օտար լեզվի հմտությունների ձեռք բերում՝ լինելով հասանելի այլ մշակույթների, նախաձեռնությունների համար: ՄԿՈՒ-ն պետք է առաջարկի կարիերայի անհատականացված ուղիներ, որպեսզի հնարավոր լինի ինտեգրել հասարակությունից դուրս մնացած անձանց և նրանց , ովքեր վաղաժամ թողել են ուսումնառությունը կամ ուսուցումը: Տարբեր դժվարություններ ունեցող աշակերտները և մեծահասակները պետք է ունենան մուտքի հեշտ հնարավորություն իրենց պահանջներին համապատասխան ուղղորդման և խորհրդատվական ծառայություններում:

Օժանդակի մրցունակությանն ու նորարարությանը

Համապատասխանել բարձր մակարդակի որակավորումների պահանջներին

Նախատեսվում է, որ 2020թ. Եվրոպական աշխատանքների գրեթե 31.5%-ը կպահանջի որակավորումների երրորդային, իսկ 50%-ը՝ ավագ հանրակրթական կամ հետմիջնակարգային (միջնակարգ լրիվ ընդհանուր կրթությունից հետո) մակարդակներ (մասնավորապես մասնագիտական որակավորումներ): Ակնկալվում է, որ 2020թ. որակավորումների ցածր մակարդակ կամ ոչ մի որակավորում չպահանջող աշխատանքների թվաքանակը կլինի մոտ 18.5%:

Նախատեսվում է, որ 2006-2020թթ. աշխատաշուկան կունենա երկակի անգամ ավելի շատ միջին, քան բարձր որակավորումներ ունեցող մարդկանց կարիք՝ փոխարինելու անձնական պատճառներով աշխատաշուկայից հեռացած կամ այն լքած մարդկանց:

Պահանջվող որակավորումների մակարդակը կբարձրանա բոլոր զբաղմունքներում՝ ներառյալ պարզ և սովորական առաջադրանքներ պարունակող ավանդական զբաղմունքները:

Սա պահանջում է մասնագիտական ու բարձրագույն կրթությունների միջև կապերի ամրապնդում և խթանում գերազանցությանը՝ միևնույն ժամանակ խուսափելով բացառումից:

Արձագանքել աշխատաշուկայի պահանջներին

գործիքների մշակման միջոցով՝ կանխորոշելու հմտություններին, ինչպես նաև աշխատանքին վերաբերող կարիքները և բացահայտելու Եվրոպական ու ազգային մակարդակներով աշխատանքների նոր տեսակներ. Եվրոպայի համար ծայրահեղ կարևոր է ունենալ գլոբալիզացված աշխատաշուկայում մրցունակ լինելու համար պահանջվող հմտությունների միջնաժամկետ կանխատեսում: Անհրաժեշտ կլինի հաշվի առնել աշխատաշուկայից հեռացող մարդկանց փոխարինելու կարիքից բխող պահանջը:

Հնացող որակավորումների արագ տեմպերի կանխորոշում

հանրակրթության և աշխատավայրի ուսուցման միջև կամուրջ ստեղծելու, երկընտրանքային ուսուցումը առաջ քաշելու, ինչպես նաև ընկերություններում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում մեծահասակների ուսուցումը զարգացնելու միջոցով:

Զարգացնել ստեղծարարությունը և խթանել նորամուծությանը:

Իրականություն դարձնի ցկյանս ուսումնառության հայեցակարգը և շարժունությունը

Կամուրջներ պետք է ստեղծվեն ընդհանուր կրթության, մասնագիտական ուսուցման և բարձրագույն կրթության միջև: Անհատականացված ուղիներ պետք է բացվեն՝ միմյանց կապակցելով նախնական ու շարունակական ուսուցումը՝ միաժամանակ արժեվորելով ուսումնառության բոլոր տեսակները՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ:

ՄԿՈՒ համակարգերում պետք է զարգանա աշխատակիցների, ուսումնառուների և ուսուցիչների շարժունությունը մի համակարգից մյուսը, մի երկրից մյուսը: Քաղաքացիները պետք է ի վիճակի լինեն կուտակել ու տեղափոխել ֆորմալ, ոչ ֆորմալ կամ ինֆորմալ համատեքստերում ձեռք բերված ուսումնառության արդյունքները, և ուսումնառության այն արդյունքները կարող են ճանաչվել, որոնք ձեռք են բերվել թափանցիկության և որակավորումների ճանաչման համար Եվրոպական գործիքները կիրառելու շնորհիվ:

Որակի ապահովման մեխանիզմները պետք է նպաստեն ՄԿՈՒ համակարգերի արդիականացմանը և փոխվստահությանը:

Այս մեխանիզմները կախված են ուսուցիչների և դասընթացավարների համար սահմանված նորագույն նախնական ու շարունակական ուսուցման վերաբերյալ այլ համգամանքներից:

Սոցիալական գործընկերները պետք է ներգրավվեն բոլոր մակարդակներում:

Պետության, սոցիալական գործընկերների, տեղական գործունյաների և քաղաքացիների միջև բաշխված պատասխանատվության սկզբունքը պահանջում է բոլոր այս շահագրգիռ կողմերի մասնակցությունը ՄԿՈՒ քաղաքականությունների մշակման աշխատանքներին:

Համապատասխան պետական և մասնավոր ռեսուրսները, ներառյալ Եվրոպական հիմնադրամները, պետք է մոբիլիզացվեն:

III ԿԵՆՏՐՈՆԱՑԱԾ ՄՆԱԼ ԵՎ ՆՈՐ ԹԱՓ ՀԱՂՈՐԴԵԼ

Հաշվի առնելով առկա մարտահրավերները, որը ունի Եվրոպան, և մինչ այժմ իրականացված գործընթացի արդյունքները՝ պարզ է դառնում, որ 2002թ. ի վեր հաստատված գերակայությունները և նորմատիվները դեռ համարվում են իրական, սակայն դրանց նոր թափ պետք է հաղորդել:

Սա ստիպում է մեզ հաշվի առնել՝

Առաջարկված չորս առաջնահերթային հատվածները հետագա գործունեության համար

1. Ազգային և Եվրոպական մակարդակով մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտում համագործակցությունն ընդլայնելու համար գործիքների ու սխեմաների իրագործում,
2. Մասնագիտական կրթության և ուսուցման համակարգերի որակի ու գրավչության բարձրացում,
3. ՄԿՈՒ- աշխատաշուկա կապերի բարելավում,
4. Եվրոպական համագործակցությանն ուղղված նախապատրաստական աշխատանքների կատարելագործում:

1. ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՄԿՈՒ) ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԼԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՈՒ ՍԽԵՄԱՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

Գործընթացն ստեղծել է գլխավոր գործիքներ որակավորումների թափանցիկությունը զարգացնելու և շարժունությանը նպաստելու համար: Նրանք ունեն էական առնչություն ՄԿՈՒ ազգային համակարգերի հետ, քանի որ հիմնված են ուսումնառության արդյունքների մոտեցման վրա և հանգեցնում են փոխվստահության համար որակի ապահովման մեխանիզմների կիրառմանը,:

Այժմ շատ կարևոր է երաշխավորել, որ դրանք իրագործվում են՝ կիրառելով համապատասխան մեթոդներ, և մշակվում են համաձայնեցված եղանակով:

Շատ կարևոր է.

1. Մշակել ուսումնառության արդյունքների վրա հիմնված որակավորումների ազգային համակարգեր և շրջանակներ՝ համաձայն Որակավորումների Եվրոպական Շրջանակի,
2. Իրագործել ՄԿՈՒ Եվրոպական Կրեդիտային հետագա Համակարգը (ՄԿՈՒԵԿ), Որակի Ապահովման Եվրոպական Հենքային հետագա Շրջանակի (ՈԱԵՀՇ)-ի հետ միասին՝ նպաստելով փոխվստահության բարձրացմանը,
3. Հաշվի առնելով սա՝ պետք է մշակվեն.

   - թռիչքային ծրագրեր, համապատասխան մեթոդներ և օժանդակող գործիքներ,
   - ոչ ֆորմալ ու ինֆորմալ ուսումնառության արդյունքները վավերացնելու սկզբունքներ և գործիքներ որակավորումների ազգային շրջանակների, Որակավորումների Եվրոպական Շրջանակի և ՄԿՈՒԵԿ-ի համակարգի իրագործման հետ միասին:

     Սա կարող է ներառել Եվրոպական տևական ցանցեր՝ օրինակ ճյուղային մոտեցման հիման վրա իրագործելու ՈԵՇ-ը և ՄԿՈՒԵԿ-ը.

   - որակի ապահովման գործիքներ:

     Սա, մասնավորապես, կարող է վերաբերել համայնքների գործիքները կիրառելու նպատակ ունեցող ընթացակարգերին.

- կայունություն տարբեր գործիքների միջև:

Թռիչքային ծրագրերը կարելի է օգտագործել (մասնավորապես ԿՓԵՀ-ի և ՄԿՈՒԵԿ-ի միջև փոխկապակցվածությունն ապահովելու համար) ցկյանս ուսումնառության հեռանկարում:

2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՈՐԱԿԻ ՈՒ ԳՐԱՎՉՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Գրավչությունը, մուտքային հնարավորությունը և որակը պետք է թույլ տան ՄԿՈՒ-ին կարևոր դերակատարություն ունենալ ցկյանս ուսումնառության ռազմավարություններում երկու նպատակով. (i) անաչառության, բիզնեսի իրականացման, մրցունակության և նորարարության համաժամանակյա զարգացում, (ii) կարիերայի զարգացման համար քաղաքացիների կողմից պահանջվող հմտությունները ձեռք բերելու, ուսուցում ստանալու, ակտիվ քաղաքացի լինելու, անձնական կարիերան ծավալելու հնարավորության ընձեռում: ՄԿՈՒ-ն պետք է նպաստի գերազանցությանը և, միևնույն ժամանակ, երաշխավորի հավասար հնարավորություններ:

Սրա իրականացման համար անհրաժեշտ է.

Օժանդակում ՄԿՈՒ գրավչությանը բոլոր թիրախային խմբերի համար

1. Օժանդակում ՄԿՈՒ-ին աշակերտների, ծնողների, մեծահասակների (և՛ աշխատող, և՛ գործազուրկ կամ պասիվ) շրջանում և ձեռնարկություններում՝ օրինակ, շարունակելով կազմակերպել հմտությունների այնպիսի մրցույթներ, ինչպիսիք են Եվրոհմտությունները,
2. ՄԿՈՒ-ում մասնակցության և անաչառ մուտքի հնարավորության երաշխավորում՝ հաշվի առնելով բացառման ռիսկի մարդկանց կամ խմբերի կարիքները (մասնավորապես դպրոցը վաղ լքող, ցածր հմտություն ունեցող և անընդունակ մարդիկ):

   Այս համատեքստում.

   - *Առանցքային կարողությունների ձեռք բերումը նախապայման է ՄԿՈՒ համար (Եվրոպական Կառավարության և Խորհրդի ցկյանս ուսումնառության գլխավոր կարողությունների վերաբերյալ 2006թ. դեկտեմբերի 18-ի առաջարկի իրագործում),*
   - *Գործընկերությանը պետք է խրախուսել դպրոցներում, տեղական մակարդակով գործունյաների և բիզնեսի հանրության շրջանում,*
   - *Պետք է աջակցել տղամարդկանց և կանանց հետաքրքրությանն ու ներգրավմանը ՄԿՈՒ այն հատվածներում, որտեղ նրանք ներկայացված չեն,*

3. Տեղեկատվական, ցկյանս ուղղորդման և խորհրդատվական ծառայություններ մուտք գործելու հնարավորության հեշտացում ցկյանս ուսումնառության

ռազմավարություններին ավելի լավ ինտեգրվելու վերաբերյալ Խորհրդի 2008թ. նոյեմբերի 21-ի որոշման իրագործման միջոցով:

Միջոցներ պետք է կիրառվեն ուղղորդման համակարգերը զարգացնելու համար, որոնք օգնում են երիտասարդներին և մեծահասակներին ավելի լավ հաղթահարել անցումները նրանց կարիերայի ուղիների ինչպես կրթության և ուսուցման, այդպես էլ բոլոր բնագավառներում:

4. Մարդկանց՝ որակավորումների մի մակարդակից մյուսին անցնելու հնարավորություն տվող ուղիների հեշտացում ընդհանուր կրթության, ՄԿՈՒ, բարձրագույն կրթության և մեծահասակների ուսումնառության միջև կապերն ուժեղացնելու միջոցով,

ՄԿՈՒ համակարգերի որակի և գերազանցության կատարելագործում

5. Որակի ապահովման մեխանիզմների ձևավորում՝ հետագայում ՈԱԵՀՇ առաջարկությանն օժանդակելու համար, ակտիվ մասնակցություն ՄԿՈՒ Որակի Ապահովման Եվրոպական ցանցին՝ մշակելով ընդհանուր գործիքներ, ինչպես նաև փոխվստահության միջոցով նպաստել ՈԵՇ-ի իրագործմանը,
6. Մասնագիտական կրթության և ուսուցման գործընթացում ներգրավված անձանց (ուսուցիչներ, դասընթացավարներ, դասախոսներ, ուղղորդող անձինք) նախնական և շարունակական ուսուցման ոլորտում ներդրումների ծավալների մեծացում,
7. ՄԿՈՒ քաղաքականությունները ճշգրիտ հետազոտության ու տվյալների շնորհիվ վստահելի ապացույցների վրա հիմնելու երաշխավորում և ՄԿՈՒ վերաբերյալ ռազմավարական համակարգերի ու տվյալների կատարելագործում,
8. Ուսումնառության արդյունքների վրա հիմնված որակավորումների ազգային համակարգերի և շրջանակների մշակում, որը կարող է ապահովել բարձր որակ՝ միաժամանակ երաշխավորելով համատեղելիությունը Որակավորումների Եվրոպական Շրջանակի հետ,
9. ՄԿՈՒ-ում նորարարության ու ստեղծարարության կատարելագործում և կրթության ու ուսուցման միջոցով ստեղծարարությանն ու նորարարությանը խթանելու վերաբերյալ Խորհրդի 2008թ. մայիսի 22-ի եզրակացությունների իրագործում,
10. Լեզվի ուսուցման զարգացում՝ համաձայնեցնելով մասնագիտական կրթությանն ու ուսուցմանը բնորոշ հատկանիշներին,
11. ՄԿՈՒ, ընդհանուր կրթության ու բարձրագույն կրթության կրթահամակարգերի մշտական և շարունակական կատարելագործում:

3. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒ ՈՒՍՈՒՑՄԱՆ (ՄԿՈՒ) - ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ԿԱՊԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Նպաստել զբաղվածությանն ու աշխատանքի անվտանգությանը, կանխորոշել և հաղթահարել անցումները աշխատաշուկայում և մեծացնել գործարարության մրցունակությունը: ՄԿՈՒ քաղաքականությունները պետք է համապատասխանեն աշխատաշուկայի կարիքներին, և այս գործընթացը պետք է ներգրավի նաև սոցիալական գործընկերներին:

Սա պետք է իրականացվի.

1. Նախօրոք պլանավորվող մեխանիզմների մշակման շարունակականություն, որը նպատակ ունի կենտրոնանալ աշխատանքների և հմտությունների վրա ազգային և Եվրոպական մակարդակներով՝ հատկորոշելով հմտությունների հնարավոր թերություններն ու պակասը, ինչպես նաև բավարարելով տնտեսության ու ձեռնարկությունների, մասնավորապես ՓՄՁ-ների հետագա հմտությունների և կարողությունների պահանջները (և՛ որակական, և՛ քանակական առումով)՝ համաձայն Եվրոպական Խորհրդի 2008թ. մարտի 13-ի ու 14-ի եզրակացությունների և նոր աշխատանքների համար նոր հմտությունների վերաբերյալ Խորհրդի 2007թ. նոյեմբերի 15-ի որոշման,

2. ՄԿՈՒ քաղաքականությունները մշակելու և իրականացնելու գործում սոցիալական գործընկերների ու տնտեսական շահագրգիռ անձանց լիարժեք ներգրավման երաշխավորում,

3. Ուղղորդման և խորհրդատվական ծառայությունների կատարելագործում՝ հեշտացնելու անցումն ուսուցումից զբաղվածություն և նպաստելու Եվրոպայում կյանքի ընթացքում ուղղորդման ոլորտում քաղաքականությունների, համակարգերի և փորձերի ուժեղացման վերաբերյալ Խորհրդի 2004թ. մայիսի 28-ի որոշման մեջ սահմանված նպատակներին([3]), և ակտիվ մասնակցություն Եվրոպական Ցկյանս Ուղղորդման Քաղաքականության Ցանցին,

4. Մեխանիզմների ուժեղացում՝ ներառյալ ֆինանսական բնույթ ունեցողները (և՛ պետական, և՛ մասնավոր): Դրանք նպատակ ունեն՝ օժանդակելու մեծահասակների ուսուցմանը մասնավորապես աշխատավայրում՝ կենտրոնանալով ՓՄՁ-ների վրա, որպեսզի հնարավոր լինի նպաստել կարիերայի ավելի լավ հնարավորություններին և բիզնեսի մրցունակությանը:

([3]) Փաստ. 9286/04

5. Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների վավերացման ու ճանաչման մշակում և իրագործում,

6. Աշխատանքի հետ կապված ուսուցում անցնող մարդկանց շարժունության մեծացում շարժունությանը օժանդակող առկա համայնքային ծրագրերի կատարելագործման միջոցով, հատկապես սկսնակների համար: Երիտասարդության շարժունության վերաբերյալ Խորհրդի 2008թ. նոյեմբերի 21-ին կայացրած եզրակացությունները պետք է նպաստեն այս գործընթացին,

7. Մասնագիտական կրթության ու ուսուցման ոլորտում և աշխատաշուկային ինտեգրվելու գործընթացը զարգացնելու մեջ բարձրագույն կրթության դերակատարության մեծացում:

Հատկապես, կարևոր է խրախուսել բարձրագույն ուսումնական հաստատություններում մեծահասակների մասնագիտական ուսուցման շարունակականության կատարելագործմանը՝ հաշվի առնելով ցկյանս ուսումնառության վերաբերյալ Եվրոպական համալսարանների կանոնադրությունը:

4. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Նպատակն է՝ (i) ամրապնդել Կոպենհագենյան գործընթացի արդյունավետությունն ու առանձնահատուկ բնույթը կրթության և ուսուցման ոլորտում Եվրոպական համագործակցության ռազմավարական հետագա շրջանակում՝ միևնույն ժամանակ երաշխավորելով կապը ՄԿՈՒ, ընդհանուր և բարձրագույն կրթության քաղաքականությունների միջև, (ii) ընդլայնել երրորդ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը:

Սրա համար անհրաժեշտ է.

1. Եվրոպական համագործակցությանն ուղղված նախապատրաստական աշխատանքների կատարելագործում ՄԿՈՒ համակարգում հավասար ուսումնառության արդյունավետությունը մեծացնելու և արդյունքներն ազգային քաղաքականությունների տեսանկյունից կապիտալիզացնելու միջոցով:

   Համակարգման բաց մեթոդի շրջանակում հատկապես կարևոր է ընդհանրացնել լիարժեք փորձերը և մեծացնել տարբեր շահագրգիռ անձանց ներգրավումը գործիքների նախագծման և իրագործման մեջ,

2. ՄԿՈՒ ինտեգրման և տեսանելիության ապահովում կրթության և ուսուցման ոլորտում Եվրոպական համագործակցության ռազմավարական հետագա շրջանակի գերակայությունների շարքում՝ միևնույն ժամանակ երաշխավորելով լիարժեք կապ ՄԿՈՒ, ընդհանուր կրթության, բարձրագույն կրթության ու մեծահասակների ուսումնառության քաղաքականությունների միջև, ինչպես նաև երիտասարդների ու լեզուների իմացության վերաբերյալ Եվրոպական քաղաքականությունների հետ կապերի ամրապնդում:

   Այս համատեքստում անհրաժեշտ է.

   - *կապեր ստեղծել Կոպենհագենի և Բոլոնիայի գործընթացների միջև,*
   - *մեծացնել Կոպենհագենյան գործընթացի տեսանելիությունը՝ որպես Լիսաբոնի նպատակներին հասնելու օժանդակ մի միջոց,*

3. Երրորդ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ փորձի փոխանակման և համագործակցության ապահովում (OECD, Եվրոպայի Խորհուրդ, Աշխատանքի Միջազգային Կազմակերպություն և հատկապես UNESCO): Այս աշխատանքին անդամ բոլոր երկրների մասնակցության իրավունքը պետք է երաշխավորված լինի:

IV ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ

Հաշվի առնելով 2008-2010թթ. Կոպենհագենյան գործընթացի գերակայությունները՝ վերոհիշյալ չորս հատվածներում սահմանված գործողությունների իրագործմանը պետք է նպաստի.

- համապատասխան պետական և մասնավոր ֆինանսավորում՝ օգտագործելով ԵՄ այնպիսի ռեսուրսներ, ինչպիսիք են Եվրոպական Սոցիալական Հիմնադրամը, Տարածաշրջանային Զարգացման Եվրոպական Հիմնադրամը և վարկերը Եվրոպական Ներդրումների Բանկից՝ նպաստելու բարեփոխումներին ազգային մակարդակով (համաձայն անդամ պետությունների գերակայությունների) և Ցկյանս Ուսումնառության Ծրագրին՝ օժանդակելու համայնքի գործիքների արդյունավետ կիրառմանը,
- ՄԿՈՒ ռազմավարությունների ծավալը, համեմատականությունը և հավաստիությունը կատարելագործելու վրա կենտրոնացած աշխատանքի շարունակականություն՝ սերտորեն համագործակցելով Eurostat-ի, OECD-ի, Cedefop-ի և Եվրոպական Կրթական Հիմնադրամի (ETF)-ի հետ, ինչպես նաև ցուցիչների ու նշաձողերի կապակցված շրջանակում ՄԿՈՒ բաղադրիչ մասի ավելի ճշգրիտ մշակում,
- հմտությունների կարիքների և թերությունների կանխորոշման համար մշակվող աշխատանքներ՝ սերտորեն համագործակցելով Cedefop-ի, ETF-ի և Eurofound-ի հետ,
- երրորդ երկրների, հատկապես ընդլայնման, ինչպես նաև Եվրոպական հարևանության քաղաքականության միտում ունեցող երկրների հետ տեղեկատվության փոխանակում:

Համագործակցությունը այսպիսի աշխատանքում պետք է լինի ներառական և ներգրավի անդամ պետություններին, Հանձնաժողովին, թեկնածու երկրներին, ԵԱԱՀ/ԵՏՏ երկրներին և սոցիալական գործընկերներին:

Cedefop-ը և Եվրոպական Կրթական Հիմնադրամը կշարունակեն աջակցել Հանձնաժողովին մասնավորապես գործընթացի վերաբերյալ առաջընթացը մշտադիտարկելու և արձանագրելու միջոցով:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել կրթության և ուսուցման ոլորտում Եվրոպական համագործակցության ռազմավարական հետագա շրջանակի վերաբերյալ արձանագրություններում ՄԿՈՒ առաջընթացի, ինչպես նաև Լիսաբոնի ազգային բարեփոխումների ծրագրերի վրա:

Հաջորդ լրացուցիչ հանդիպումը

Նախարարական հաջորդ լրացուցիչ հանդիպումը տեղի կունենա Բրյուգեում, Բելգիայում 2010թ.-ին: Նպատակն է գնահատել Կոպենհագենյան գործընթացի իրագործումը և, 2010թ.-ից սկսած, Եվրոպական համագործակցության ռազմավարական հետագա շրջանակի համատեքստում կրթության և ուսուցման ոլորտում ազդեցություն ունենալ այս ռազմավարության վրա: